Արձանագրություն N 4
«ՏԿՆ-ԳՀԾՁԲ-2018/14» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«16» մարտի 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը և Ա. Պապյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մկրտչյանը

Ի. Գնանշման հարցում ընթացակարգի հայտերի գնահատման մասին
(Կ. Գասպարյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն <<Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ>> ՓԲԸ -ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետը՝ մերժել <<Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

2. Քանի որ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով << Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի և <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են տվյալ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, առաջարկված գների նվազեցման նպատակով <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի և <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ի հետ վարել միաժամանակյա բանակցություններ:

3. Բանակցությունների վարման համար գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018 թվականի մարտի 20-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Պապյան

_____ Ն. Մեսրոպյան

Քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան